Լրացուցիչ տեղեկություններ DAAD-ի **կրթաթոշակների վերաբերյալ երաժշտության բնագավառում**

Երաժշտագիտություն առարկան Գերմանիայում դասավանդվում է համամալսարաններում: Այս բանագավառի համար կրթաթոշակին հավակնողները չեն դիմում որոշակի հմտություններ ձեռք բերելու, այլ երաժշտության բնագավառում ավելի խորացված ուսուցման համար:

DAAD-ի ուսումնական կրթաթոշակները երաժշտության բնագավառի համար որպես կանոն տրվում են նրանց որոնք արդեն հայրենիքում հանձնել են ավարտական քննությունը և սպառել են բոլոր հնարավորությունները իրենց գործիքով հայրենքում գիտելիքները խորացնելու: Դիմելու պահին նրանք պետք է մեկ տարուց ավել մնացած չլինեն Գերմանիայում:

Միայն բացառիկ դեպքերում է հնարավոր օժանդակություն ստանալ Գերմանիայում մի քանի տարվա կրթության համար , եթե նախատեսված ուսուցման համար ոչ մի հնարավորություն չկա հայրենիքում անցկացնելու և իհարկե այն պետք է լավ հիմնավորված լինի:

Կրթաթոշակի շնորհման վերջնական որոշումը երաժշտության բնագավառում կայացնում է DAAD-ի մասնագիտական հանձնաժողովը, որը բաղկացած է լինում Գերմանիայի բարձրագույն երաժշտական բուհերի պրոֆեսորներից: Որոշման համար կարևոր դեր է կատարում բացի գրավոր փաստաթղթերից նաև ներկայացված ձայնագրությունները:

Կրթաթոշակը տրվում է Գերմանիայում որևիցէ պետական բարձրագույն երաժշտական բուհում ուսուցանելու համար: Որպես կանոն կրթաթոշակի տևողությունը մեկ տարի է: Ազատ խորացված ուսուցման համար տրվող կրթաթոշակները կամ մեկ տարվա որակավորման կուրսերի համար տրվող կրթաթոշակները հնարավոր չէ երկարացնել:

Կրթությունը մի քանի տարվա որոակվորման ուսուցման համար առանձին դեպքերում կարելի է երկարացնել միայն ըստ հայցադիմումի: Ընդհանրապես բոլոր երաժշտական բուհերը առաջարկում են որպես կանոն 4 կիսամյակային տևողությամբ որակավորման դասընթացներ: Որակավորման դասընթացների մասնակցությունը չի նշանակում կրթաթոշակի մեխանիկորեն երկարացում: Կրթաթոշակ ստանալը դեռ չի նշանակում թույլտվություն ունենալ բուհ ընդունվելու: Մեկ տարուց ավելի տևողությամբ կրթաթոշակներ կարելի է ստանալ միայն այն դեպքում, երբ ցանկալի կրթությունը հնարավոր չէ ստանալ հայրենիքում և կրթական նպատակը խելամիտ է թվում:

Տարիքային սահմանափակումները որոշում է յուրաքանչյուր բուհ առանձին, այն կարող է կախված լինել նաև դիմորդի կրթական մակարդակից, ընտրած առարկայից, որպես կանոն սովորաբար ընտրվում է 28, 30 տարեկան ից ոչ բարձր թեկնածուները:

Ներկայացվող ձայնագրությունները պետք է համապատասխանեն հետևայալ պահանջների.

1. Ձայնագրությունը պետք է պարունակի կատարողական դժվարություն ներկայացնող ստեղծագործություն
2. ոլոր ձայնագրությունները պետք է կատարված լինեն ոչ շուտ քան դիմելու պահից 1 տարի առաջ և պետք է ունեն լավ տեխնիկական որակ
3. Ձայնագրությունները պետք է լինեն CD, MD, DAT, ծայրահեղ դեպքում նաև ձայներիզ վրա
4. Ձայնագրությունների վրա պետք է նշված լինի՝

- ա. դիմորդի անուն ազգանունը
- բ. երգահանի անուն ազգանունը
- գ. ստեղծագործության անվանումը
- դ. առանձին տվյալներ
- ե. ընտրված առանձին նախադասություններ կամ գործերի ինդեքսը
- զ. առանձին համարների տևողության ժամանակային տվյալներ
- է. ձայնագրման վայրը
- ը. ձայնագրման ամիս ամսաթիվը

Ինստրումենտալիստները այսպես կոչված լուրջ երաժշտության ասպարեզի կատարողները պետք է ներկայացնեն ամբողջական, մասնագիտության համար կարևորություն ներյշկայացնող 3 տարբեր ժամանակշրջանի, ոճի գործերի ձայնագրություններ, այլ ոչ թե առանձին հատվածներ կամ նախադասություններ:

Ջազային կատարողները պետք է ներկայացնեն 3 տարբեր բնույթի կամ տարբեր տեմպի կատարումներ, ինչպես օր. բալլադ, առագ տեմպի երաժշտություն:

Կամերային երաժշտության կամ խմբակային երաժշտություն ներկայացնողներին անհարժեշտ է նաև բացի 3 պահանջվող սոլո գործերից ամենաքիչը մեկ գործ սեփական կատարմամբ ներկայացնել:

Անսամբլներում նվագող երաժիշտները պետք է ներկայացնեն նաև սոլո կատարում:

Երգիչները պետք է ներկայացնեն համապատասխան համապարփակ ծրագիրը տարբեր ոճային ժամանակաշրջաններից:

Ձայնագրությունների ընդհանուր տևողությունը երգիչների մոտ պետք է լինի 20 րոպե, կատարողների /ինստրումենտալիստների/ մոտ 30 րոպե:

Կատարվող ստեղծագործությունների կատարողական բարդությունը պետք է համապատասխանի դիմորդի կրթական մակարդակին:

Դիմումները կդիտարկվեն միայն այն դեպքում, երբ նրանք համապատասխանեն բոլոր պահանջներին:

Հատուկ պայմաններ են գործում հետևյալ ասպարեզի դիմորդների համար՝

ա. կոմպոզիտորներ

Կոմպոզիտորները պետք է ներկայացնեն իրենց պարտիտուրաները ձայնագրություններով, հնարավորինս նոր ժամանակշրջանի աշխատանքներ պետք է ընդգրկված լինեն: Պարտիտուրաների վրա պետք է նշված լինի պատրաստման ամիս ամսաթիվը: Ձայնագրությունների համար գործում են նույն պահանջները , որոնք նշված են 3. և 4. կետերում:

բ. դիրիժորներ և խմբավարներ

Դիրիժորները և խմբավարները պետք է ներկայացնեն իրենց ղեկավարությամբ որևէ կատարման տեսագրություն (VHS PAL, VHS NTSC, -4,43 Mhz և PAL-SECAM; -OST, բոլորը SP արագությամբ): Ստեղծագործությունները պետք է ներկայացվեն տարբերի ոճի մեջ / բարոք, դասական, օպերային, ժամանակակից/ Նախընտրելի է ներկայացնել փորձի տեսագրություն՝ հնարավորինս դեմքով դեմի կամերան: Հավելյալ պետք է ներկայացնել նաև սեփական կատարման ձայնագրություն:

Դիմորդները բուհ ընտրելու հարցում ազատ են: Խորհուրդ է տրվում ժամանակին դիմել բուհերին ՝ նրանց առաջարկներին և ուսումնական ընթացքին ծանոթանալու: Դիմորդը դիմելու պահին DAAD-ին տեղյակ է պահում թե որ բուհում և որ դասախոսի մոտ է նա ցանկանում սովորել, և արդյոք արդեն առկա է որևէ կոնտակտ նշված անձի հետ: Դասախոսը չի կարող լինել նույն ազգության ներկայացուցիչ և նույն մշակույթի կրողը (միայն լավ հիմնավորված բացառիկ դեպքերում):

Առանձին երաժշտական բուհեր իրենք են որոշում թե կրթաթոշակառուին որ կուրս պետք է տանել՝ կախված նրա մինչ այդ ցուցաբերած առաջադիմությունից:

Որոշ դեպքերում անհրաժեշտ է լինում նաև հանձնել ընդունելության քննություն:

Կրթաթոշակ տրամադրելու փաստը դեռևս բուհ ընդունվելու թույլտվության գրավական չէ:

Լրացուցիչ տեղեկություններ DAAD-ի **կրթաթոշակների վերաբերյալ կիրառական արվեստ, դիզայն և կինոարվեստի բնագավառում**

1. Կիրառական արվեստ, դիզայն և կինոարվեստ բնագավառում կրթաթոշակներ տրվում են որպես կանոն այն դիմորդներին, որոնք սպառել են հայրենիքում կրթություն ստանալու բոլոր հնարավորությունները և նախընտրելի է, որ նաև ավարտել են համապատասխան վկայականով և կրթությունը սկսվելու պահին չեն լինի ավելի քան 32 տարեկան:
2. Կրթաթոշակի տևողությունը մեկ տարի է: Առանձին դեպքերում կարող են երկարացվել ևս մեկ տարով:
3. Կրթաթոշակը տրվում է Գերմանիայում որևէ պետական բարձրագույն արվեստի դպրոցում ուսանելու համար:
4. Վերջնական որոշումը վերը նշված բնագավառների համար կրթաթոշակ տրամադրելու հարցում կայացնում է DAAD-ի մասնագիտական հանձնաժողովը, որը կազմվում է այդ ոլորտի դասախոսներից: Գրավոր ներկայացվող փաստաթղթերի հետ մեկտեղ պետք է ներկայացվեն նաև աշխատանքային նմուշներ (օրիգինալներ, լուսանկարներ, դիապոզիտիվներ կամ տեսագրություններ, մասնավորապես ֆիլմեր CD կամ DVDվրա), որոնք կարևոր հիմք կհանդիսանան որոշման համար:
5. Համայնքային աշխատանքների ժամանակ, մասնավորապես պրոյեկտների դեպքում պետք է նշվի դիմորդի օժանդակությունը աշխատանքին կամ գրավոր ներկայացված լինեն տվյալները:
6. Անհրաժեշտ են նաև ներկայացնել հետևյալ գործերը որպես ի լրումն մնացած աշխատանքների:

ա. նկարիչներ

Նկարիչները պետք է ներկայացնեն մինչև 5 գործ, որոնք կատարվել են ոչ շուտ քան դիմելու պահից երկու տարի առաջ ընկած ժամանակահատվածում: Ինչպես նաև բազմաթիվ էսքիզներ, գծանկարներ, լուսանկարներ կամ տեսագրություններ, որոնք պետք է լինեն ստորագրված և պիտի անպայման նշված լինի կատարման ամսաթիվը:

Աշխատանքները կարող են ներկայացվել ինչպես թղթապանակներով, այնպես էլ փաթեթի տեսքով: Եթե հնարավոր չէ ուղարկել օրիգինալները /ուղարկելու խնդիր, մաքսային խնդիր կա, ապա դիապոզիտիվները պետք է ներկայացվեն CD-ROM կամ DVD վրա: Դիապոզիտիվների վրա պետք է նշանով ցույց տրվի առջևի կողմը, ինչպես նաև դեպի վեր և վար ուղղությունները, պետք է լինեն տվյալներ՝ կատարման տեխնիկայի, չափերի (ֆորմատի), լուսանկարված աշխատանքի կատարման ամսաթվի վերաբերյալ:

բ. քանդակագործներ

Քանդակագործները պետք է ներկայացնեն լուսանկարներ (18x24սմ չափսի, ստորագրությամբ և ամսաթվով), գրաֆիկական աշխատանքներ՝ հնարավորության դեպքում օրիգինալ, կամ էսքիզներ և գծանկարներ, դիապոզիտիվներ, CD-ROM կամ DVD տեսագրություններ: Դիապոզիտիվների վրա պետք է նշանով ցույց տրվի առջևի կողմը, ինչպես նաև դեպի վեր և վար ուղղությունները, պետք է լինեն տվյալներ՝ կատարման տեխնիկայի, չափերի (ֆորմատի), լուսանկարված աշխատանքի կատարման ամսաթվի վերաբերյալ:

գ. դիզայներներ

Դիզայներները ներկայացնում են լուսանկարներ /ֆորմատները 18 / 24 սմ/, գրաֆիկական աշխատանքներ, հանարավորության դեպքում օրիգինալներ կամ էսքիզներ, գծանկարներ, դիապոզիտիվներ /տվյալները լուսանկարների վրա: Դիապոզիտիվների վրա ներքև ա. 1. և 2. CD-ROM կամ DVD կամ տեսագրություն, մասն. փոքր մոդելներ:

դ. կինոարվեստ

- **Ռեժիսորները և սցենարիստները** պետք է ներկայացնեն Ֆիլմեր (Super 8, 16 mm, մագնիսային կամ օպտիկական ձայնագրություններ, հնարավորության դեպքում վիդեոկոպիաների տեսքով): Տեսաժապավեններ (միայն VHS-PAL-System և

  PAL-U-matic lowband):

  Տեսաժապավենների վրա պետք է նշված լինեն վերնագրերը, ֆիլմի տևողությունը և նկարահանման ամսաթիվը: Խնդրում ենք նշել նաև տեսագրության տեխնիկական տվյալները և անհրաժեշտ սրքավորումները (օր©՝ պրոյեկտոր):

  Առավել երկար գործերը ներկայացնել միայն հատվածաբար: Բոլոր Ֆիլմերը և տեսաժապավենները պետք է պատրաստ լինեն անխափան ցուցադրության համար, որպեսզի հնարավոր լինի խուսափել տեխնիկական խափանումներից:

7. Կրթաթոշակ տրամադրելու փաստը դեռևս բուհ ընդունվելու թույլտվության գրավական չէ: Կրթաթոշակը ուժի մեջ է մտնում միայն այն դեպքում, երբ արդեն առկա է գերմանական բուհում կրթությունը շարունակելու վերաբերյալ գրավոր թույլտվությունը:

8. Առանձին երաժշտական բուհեր իրենք են որոշում թե կրթաթոշակառուին որ կուրս պետք տանել՝ կախված նրա մինչ այդ ցուցաբերած առաջադիմությունից: Որոշ դեպքերում անհրաժեշտ է լինում նաև հանձնել ընդունելության քննություն:

Լրացուցիչ տեղեկություններ DAAD-ի կրթաթոշակների վերաբերյալ դերասանական արվեստ, ռեժիսուրա, պար և խորեոգրաֆիա

1. Կրթաթոշակները կիրառական արվեստ, դիզայն և կինոարվեստ բնագավառում կրթաթոշակներ տրվում են որպես կանոն այն դիմորդներին, որոնք սպառել են հայրենիքում կրթություն ստանալու բոլոր հնարավորությունները և նախընտրելի է, որ նաև ավարտել են համապատասխան վկայականով և կրթությունը սկսվելու պահին չեն լինի ավելի քան 32 տարեկան:
2. Կրթաթոշակի տևողությունը մեկ տարի է: Առանձին դեպքերում կարող են երկարացվել ևս մեկ տարով:

3. Կրթաթոշակը տրվում է Գերմանիայում որևէ պետական բարձրագույն արվեստի դպրոցում ուսանելու համար:
4. Դերասանական արվեստ և ռեժիսուրա ուսանող դիմորդները պետք է ունենան գերմաներենի լավ իմացություն, պարի և խորեոգրաֆիաի համար բավարար են գերմաներենի բազային և անգլերենի լավ իմացություն: Լեզվի իմացության վկայականը պետք է ներկայացված լինի:

5. Անհրաժեշտ են նաև ներկայացնել հետևյալ գործերը որպես ի լրումն մնացած աշխատանքների:

ա. **Դերասաններ՝** Վիդեո կամ DVD: Դիմորդը պետք է ներկայացնի իրեն (գերմաներենով), դիմելու շարժառիթները, ինչպես նաև Գերմանիայում կրթական նպատակները (մոտ 5 րոպե): Ձայնագրությունները պետք է պարունակեն հատվածներ երկու տարբեր դերերից յուրաքանչյուրը 5-ից 10 րոպե տևողությամբ, որոնցից մեկը կարող է լինել անգլերենով: Տեխնիկապես թերի ձայնագրությունները (լուսավորություն, ձայնագրության որակ) չեն դիտարկվի:

բ. **Ռեժիսուրա՝** Վիդեո/ DVD ներկայանալ (ինչպես դերասանները), այնուհետև ֆաստագրական կադրեր սեփական պրոյեկտներից: Լրացուցիչ կարելի է ներկայացնել նաև գրավոր նյութեր:

գ. **Պար՝** Վիդեո/ DVD ներկայանալ (ինչպես դերասանները), այնուհետև երկու պարային հատվածներ՝ մեկ դասական և մեկ ժամանակակից:

դ. **Խորեոգրաֆիա՝** Վիդեո/ DVD ներկայանալ (ինչպես դերասանները), այնուհետև սեփական գործերից՝ մոտ 15 րոպե տևողությամբ:

Բոլոր դիմորդները պետք է ծանոթ լինեն գերմանական բուհերում սովորելու հնարավորություններին: Համալսարանի ընտրության համար ներկայացված հիմնավորումը և նախապես գոյություն ունեցող կապը հաստատող տեղեկանքը դրականորեն է ազդում ընտրությունը կայացնելու համար: